

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ.Գ.ՍՎԱԶԼՅԱՆ, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ. Ե., 2000, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 500 էջ: Պոլսահայոց բանահիւսութիւնը, Ե., 2000, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 592 էջ:

Առաջին գիրքը նվիրված է Հայոց ցեղասպանության 85-ամյա տարելիցին: Հայոց ցեղասպանության վկա վերապրողների ցուցմունքների հրատարակությամբ հեղինակը փաստորեն աջակցում է ցեղասպանության ճանաչման և Հայ դատի արդարացի լուծման կարևոր գործին:

Աշխատության առաջաբանում Վերժինե Սվազյանն իրավացիորեն նշում է, որ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նույնպես և Հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքական կառավարության գործադրած ոճրագործության պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, քանի որ նրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին ունեն ապացուցողական նշանակություն:

Ստվարածավալ Հատորով ներկայացված 600 միավոր պատմաճանաչողական, փաստավավերագրական կարևոր արժեք ներկայացնող բնագրերը հեղինակը գրառել է 1915 - 1922թթ. ցեղասպանության ընթացքում իրենց պատմական բնօրրանից բռնագաղթված շուրջ 550 ականատես վերապրողներից, ապա ձայնագրել տեսագրել և վերծանել: Ժողովրդական այդ նյութերը հեղինակը գրառել է Հայաստանի տարբեր շրջաններից, մասամբ նաև Հունաստան, Ֆրանսիա, Ամերիկա, Թուրքիա կատարած ուղևորությունների ընթացքում: Գրքում ընդգրկվել են նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվի ձեռագիր օրագրերի և հուշապատմանների ֆոնդում պահվող՝ ականատես վերապրողների՝ սերունդներին ավանդ թողած հուշերը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Սփյուռքահայ Համայնքների պատմության և մշակույթի նախկին բաժնի գիտաշխատողների կողմից Հայաստանի տարածքում տեսագրված՝ ցեղասպանությունից վերապրած ականատեսների պատմած վկայությունները և Մեծ եղեռնի նահատակ Գրիգոր Զոհրապի դստեր՝ Դոլորես Զոհրապ-Լիպմանի պատմած ու ձայնագրված հուշերը: Վ.Սվազյանը վերծանել է նաև այդ նյութերը և առաջին անգամ ամբողջական տեսքով ներկայացրել գիտական ու հասարակական ամենալայն շրջաններին:

Սույն Հատորի հրատարակությունը հատկապես արդիական հնչելուծություն է ստանում այն առումով, որ թուրքական կառավարությունը, անհանգստացած աշխարհի մի շարք երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման իրողություններ, ճգնում է ամեն գնով խեղաթյուրել Հայերի նկատմամբ դործադրված ոճրագործությունների ստույգ իրողությունները՝ խնդիրը սոսկ համարելով պատմաբանների, գիտնականների հետազոտության առարկա:

Վերոհիշյալ աշխատանքի գաղափարը Վ.Սվազյանը մտահղացել է դեռևս 1950-ական թթ.՝ ձեռնամուխ լինելով Հայոց ցեղասպանությունից վերապրած ականատես-վկաների պատմած հուշերի գրառման ոչ դյուրին աշխատանքին: Նրա սկսած գործը ելակետային էր ու հեռանկարային:

Գրքում ներկայացված ցեղասպանության վկաները Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի 70 բնակավայրերի (Սասուն, Մուշ, Բիթլիս, Շատախ, Վան, Բայազետ, Իզդիր, Ալաշկերտ, Կարս, Արդվին, Բաբերդ, Շապին-Գարահիսար, Սեբաստիա, Էրզրում, Խնուս, Նրզնկա, Արաբկիր, Խարբերդ, Քղի, Բայու, Մալաթիա, Տիգրանակերտ և այլն) ներկայացուցիչներն են:

Ժողովածուի գիտականորեն համակարգված ներքին կառուցվածքը վկայում է հեղինակի մեծ պատասխանատվությունը նյութերի դասակարգման խնդրում: Առաջին բաժնում ընդգրկված հուշերը Հայոց ցեղասպանության ականատես-

վկանների անձնական ստույգ ու ճշմարտացի, անմիջական տպավորություններն են, որոնք միայնաց հաստատելով, շարունակելով և ամբողջացնելով, դառնում են Հայ ժողովրդի պատմական հավաքական Հիշողությունը: Երկրորդ «Պատմական գրույցներ» բաժինը Հեղինակը ինքնանպատակ չի առանձնացրել: Նա դրանով իսկ վերահաստատում է այն իրողությունը, որ ժողովրդի պատմական Հիշողությունը բնավ չի մեռնում, այլ շարունակում է գոյատևել նաև Հետագա սերունդների Հիշողության մեջ, պատմական գրույցների տեսքով Հարստացած նույնիսկ վիպական հատկանիշներով: Հատորի երրորդ բաժնում ներկայացված՝ Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղարդած պատմական բնույթի երգերում ու վիպերգերում արտացոլված են երիտթուրքական կառավարության կազմակերպած գորահավաքի, դինահավաքի, տեղահանության, ջարդի ու կոտորածի, որվիկորույս մայրերի, որբի ու որբանոցի, Հերոսամարտերի, Հայրենասիրության ու Հայրենաքաղճություն մասին գեղարվեստորեն վերարտադրված հուզիչ ու տպավորիչ դրվագներ: Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել նաև թուրքալիզու, սակայն բացահայտ հայկական ծագմամբ պատմական բնույթի երգերը: Պատմական բնույթի նյութերի մեջ ժողովրդական պարզ լեզվով պատկերված են խաղաղ, ստեղծագործ կյանքով ապրող արևմտահայության հնամենի կենցաղն ու սովորույթները, երիտթուրքական կառավարության պարագլուխների՝ Թախթի, Էնվերի, Ջեմալի և այլոց գործադրած դաժանությունները, ժողովրդի կրած վիշտն ու տառապանքը, ինքնապաշտպանական մարտերում մարտիրոսացած հերոսների՝ շապինգարահասարցի Անդրանիկ Օզանյանի, վանեցի Արմենակ Եկարյանի, Մեծն Մուրադի (Համբարձում Պոյաճյան), մուսալեուցի Եսայի Յաղուբյանի, Տիգրան Անդրեասյանի, ուրֆացի Մկրտիչ Յոթնեղբայրյանի, այնթապցի Ադուր Լևոնյանի, գելթունցի Արամ Չոլաքյանի, Հաճրնցի Կարապետ Չալյանի, աղզային վրիժառու Սողոմոն Թեհլիրյանի և Հայտնի ու անհայտ այլ Հայորդիների սիրանքները:

Հատորի գիտավերլուծական բաժինը կազմող պատմաբանագիտական ակնարկում Վ.Մկազյանը պատմական ստույգ փաստերը մանրամասնել ու լրացրել է ականատես վերապրողների պատմած հուշերով, անդրադարձել հատորում ընդգրկված նյութերի ժանրային ու տիպաբանական առանձնահատկությունների լուրջազայտմանը: Հատորն օժտված է նաև բնագրերի ներքին բովանդակությունը լուսաբանող գիտատեղեկատվական աղբյուրներով, ունի դժվար հասկանալի և օտար բառերի ծավալուն ընթացք, ծանոթագրություններ՝ նյութերի ծագման հայրենիքը, գրառման վայրն ու ժամանակը լուսաբանող համադրական աղբյուրներ, վերապրողների մասին կենսագրական տվյալներ՝ լուսանկարներով հանդերձ, երգերի հղանակների նոտագրություններ, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն ամփոփումներ, ինչպես նաև 1915 - 1922թթ. թուրքական կառավարության իրականացրած՝ արևմտահայերի տեղահանության և ցեղասպանության մասին գաղափար տվող գունավոր ուղեցույց քարտեզ: Ըստ հատորի խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի. «...Ժողովածուն ունի հույժ պատմական, անզամ քաղաքական արժեք ու նշանակություն... Ականատեսների այդ հուշերն ու մանրամասն, թուրքալեզու երգերն ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն Հայ ժողովրդի ուլբերգական այդ շրջանի պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին հենց թուրքալեզու երգերով ու նրանցում հնչող մեղադրանքներով հակահարված տալու առումով» (էջ 11 - 12):

Սույն սովորաբար հատորում ընդգրկված Հայոց մեծագույն ողբերգության պատմական իրադարձությունները փաստող, հիմնավորող ժողովրդական վավերագրերը, Հեղինակի հավաստմամբ, ոչ միայն անցյալի վկայություններն են,

այլև՝ ապագայի նախագուշացում, որոնք առաջին անգամ ներկայացվում են աշխարհին և մարդկության արդար դատին (էջ 17):

Ստամբուլի և Իշխանաց կղզիների Հայ բանասացներից գրառած բազմա- բնույթ ժողովրդական նյութերին ավելացնելով նաև Երևանում, Աթենքում, Լոս Անջելեսում, Սան-Ֆրանցիսկոյում բնակվող, ծագումով պոլսեցիներից նախկինում իր գրառած նյութերը՝ Վերժինե Սվազյանը 2000թ. լույս ընծայեց նաև «Պոլսա- Հայոց բանահիւսութիւնը» արժեքավոր, ինքնատիպ աշխատությունը՝ գիտական շրջանառության ոլորտ ընդգրկելով պոլսահայոց պատմության, արդի կյանք ու կենցաղի, մշակույթի, բառ ու բանի, խոսք ու գրույցի տարաբնույթ կողմերն արտացոլող շուրջ 1518 միավոր ժողովրդական սկզբնաղբյուրային լուր՝ արժեք ներկայացնող նյութեր: Ժողովածուի առաջաբանում Վ.Սվազյանը վկայակոչում է այն օբյեկտիվ և սուբյեկտիվ դրդապատճառները, որոնք նպատակամղել են նրան Հետազոտական ձեռնամուխ լինել այդ ոչ դյուրին աշխատանքին:

XX դարասկզբին պոլսահայոց բանահիւսության առանձին նմուշներ են գրառվել և հրատարակվել Հայտնի լեզվաբան, բնիկ պոլսեցի Հրաչյա Աճառյանի և նրա քրոջ կողմից (Ազգագրական Հանդես, գիրք 9, Թիֆլիս, 1902. էջ 180 - 196): Վ.Սվազյանն իր ժողովածուով նպաստել է ոչ միայն պոլսահայոց բանահյուսության վերաբերյալ ամբողջական պատկերացումների ձևավորմանը, այլև պատմամշա- կութային կարևորություն ներկայացնող, կենդանի դիտարկումներով ձեռք բերված՝ դարավերջյան վավերական տվյալների հաղորդմամբ ու դրանց համալիր Հետազոտմամբ նորովի է մեկնաբանել արդի պոլսահայ համայնքի ներքին կյանքի բազմաբովանդակ կողմերը:

Ժողովածուի առաջաբանը, պատմամշակութային ակնարկը, բանահյուսական նյութերի ընդհանուր բնութագրություններն աչքի են ընկնում խորը վերլուծու- թյուններով: Դրանք պոլսահայ Հասարակական, քաղաքական, եկեղեցական, կրթամշակութային, պատմաազգագրական արդի ուրույն կյանքը բնութագրող կենցաղապատկերներ են, Հիշյալ բնագավառում համայնքի կենսունակության պահպանմանն ու հարատևմանն աջակցող հոգևոր ու աշխարհիկ անհատների Հայանպաստ գործունեության վերհանում, բանահյուսական ավանդապահության մակարդակը լուսաբանող գիտահետազոտական վերլուծություններ:

Հեղինակը Հիշյալ աշխատությունը ներկայացրել է արևմտահայերեն: Այն ինքնանպատակ չի կատարվել: Նախ՝ ժողովածուի բանահյուսական դասական ձևերի մեջ պահպանված բնագրերի Հետ արևմտահայերենը մի գեղեցիկ ներդաշնակություն է կազմում՝ աշխատությանը հաղորդելով ինքնատիպ երանգ, նպաստելով պոլսահայ համայնքի կոլորիտի լիովին պահպանմանը և երկրորդ՝ գավառներից վերաբնակված, իրենց մայրենին գրեթե կորցրած, արդի պոլսահայ համայնքին ևս դյուրընկալելի ընթերցանության նյութ է տրամադրվել:

Բնագրերը ներկայացնում են ժողովրդական Հեքիաթներ, ավանդական, կրոնաբարոյախոսական, զավեշտական, կենդանական, կենցաղային, պատմական զրույցներ, օրորոցայիններ, մանկական, պատանեկան, սիրային, պանդխտության, ծիսական (Հարսանեկան, տոնական), կենցաղային, բնության երգեր, առած- ասացվածքներ, խրատներ, անեծք-օրհնանքներ, դարձվածներ, Հանելուկներ, շու- տասելուկներ, Հանգավոր ասույթներ, Հավատալիքներ, աղոթքներ և մկրտության, ամուսնության ու հուղարկավորության ծեսեր: Ժողովածուն ունի բնագրերի ներ- քին բովանդակությունը բացահայտող գիտատեղեկատվական բաժիններ՝ բանահյուս- ական նյութերի Հավելված, Ծանոթագրություններ, բանասացների կենսագրական տվյալներ՝ իրենց լուսանկարներով, երգերի նոտագրություններ, դժվարիմաց բառերի բառարան և անգլերեն ամփոփում:

Ս.Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների քննադատ